ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2
ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

գ. Աշոցք 10 փետրվարի 2021թ. ժամը 10:00

Մասնակցում էին՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ	Իգիթ Առաքելյան
Անդամներ	Գեղամ Գևորգյան
	Սրապ Հարությունյան
Գնահատող հանձնաժողովի քարտուղար	Բաբկեն Աբրեյան

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման մասին

Հանձնաժողովի նախագահը նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման հայտով սահմանված՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով ընթացակարգի շրջանակում ձեռք բերվող սեղմված բնական գազի նախահաշվային գինը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 620 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղարը հաղորդեց հանձնաժողովի անդամներին, որ պատվիրատուի կողմից հրավեր ստացած մասնակիցը՝ «Ազգանաս Բերնեցյան» ՍՊԸ-ն (հասցեն՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Շինարարների 33, էլ. փոստ՝ azganaz@mail.ru) ներկայացրել է հրավերով պահանջվող գնային առաջարկ: Այնուհետև քարտուղարը մասնակցի ներկայացրած գնային առաջարկը հանձնեց հանձնաժողովի նախագահին:

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը՝ մեկ թվով արտահայտված, որը կազմում էր 600 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովը գնահատեց գնային առաջարկի համապատասխանությունը գնման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Անհամապատասխանություններ չարձանագրվեցին:

Հաշվի առնելով գնահատման արդյունքները՝ հանձնաժողովը որոշեց.

Որոշում N 1

ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Ազգանաս Բերնեցյան» ՍՊԸ-ին:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 2

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից «Ազգանաս Բերնեցյան» ՍՊԸ-ի հետ կնքել սեղմված բնական գազի մատակարարման պայմանագիր:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Որոշում N 3

Հաստատել ՀՀ ՇՄ ԱՀ-ՄԱԱՊՁԲ-21/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Որոշումն ընդունվեց ձայների 3 կողմ, 0 դեմ հարաբերակցությամբ:

Գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի անգործության ժամկետ չի սահմանվում, և հանձնարարեց քարտուղարին նիստին հաջորդող 4 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակցին ուղարկել ծանուցում՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ _____ Իգիթ Առաքելյան

Հանձնաժողովի անդամներ _____ Գեղամ Գևորգյան

_____ Սրապ Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Բաբկեն Աբրեյան